600.0062.23.11.01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 նոյեմբերի 2001 թվականի № 62
քաղ.Երևան

Հողմաէլեկտրակայաններից առաքվող էլեկտրաէներգիայի սակագների մասին

Ղեկավարվելով էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներով, հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի ե), զ), ը), թ) և 17-րդ հոդվածի ա), բ) ենթակետերը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում ավելի քան երկամյա հողմապաշարագիտական հետազոտությունների խոստումնալից արդյունքները և հողմաէլեկտրակայանների կառուցման ու շահագործման նախնական տեխնիկատնտեսական հիմնավորումները, ինչպես նաև հանրապետության էներգիայի այլընտրանքային աղբյուրների արդյունավետ օգտագործման, ՀՀ էներգետիկական անվտանգության ապահովման, էներգետիկական անկախության բարձրացման և բնագավառում ներդրումների խրախուսման նպատակով ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Մինչև 2005 թվականի հունվարի 1-ը կառուցվող հողմային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրաէներգիայի վաճառքի սակագինը շահագործման առաջին տարվա համար սահմանել 5 ԱՄՆ ցենտ/կՎտժ-ին համարժեք դրամ՝ առանց ԱԱՀ-ի:

2. Շահագործման երկրորդ տարվանից սկսած՝ մինչև 2016թ. մարտի 21-ը ընկած ժամանակաշրջանի համար, սակագնի ճշգրտման սկզբունքները և մեխանիզմները՝

կապված սղաճի և ԱՄՆ դոլար-դրամ փոխարժեքի փոփոխության հետ, կամրագրվեն կառուցման լիցենզիայում:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2002 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի նախագահ՝ ***Վ. Մովսեսյան***